# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ ՅՈՒՆ N 3

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

## *«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

ք. Երևան 16 նոյեմբերի 2018թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն բանկի Խորհրդի թիվ 37/23-28.09.18թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև ս.թ. հոկտեմբերի 17-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել ժողովի անցկացման օրվա դրությամբ վերադարձված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:

Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են՝

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 1,852,533 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,404,069 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 75.79%-ը:

Քվորումը ապահովված է:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը՝

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի էմիսիոն եկամուտներից՝ 33,438,300 (երեսուներեք միլիոն չորս հարյուր երեսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, չբաշխված շահույթից՝ 2,524,160,700 (երկու միլիարդ հինգ հարյուր քսանչորս միլիոն հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ և Գլխավոր պահուստից՝ 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ կանոնադրական կապիտալի ավելացմանն ուղղելու միջոցով Բանկի կանոնադրական կապիտալն ավելացնելու և դրա հաշվին 3,000 ՀՀ դրամի չափով մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը մեծացնելու վերաբերյալ:
2. Բանկի Կանոնադրության փոփոխված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցի, բաշխվել են հետևյալ կերպ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. Առաջին հարց | կողմ | 1,404,068 | ձայն կամ մասնակիցների ձայների | 99.9999% |
| | դեմ | 1 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0.0001% |
| | ձեռնպահ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | անվավեր | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| 2. Երկրորդ հարց | կողմ | 1,404,069 | ձայն կամ մասնակիցների ձայների | 100.0% |
| | դեմ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | ձեռնպահ | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |
| | անվավեր | 0 | ձայն կամ մասնակիցների ձայների | 0% |

### *Ժ Ո Ղ Ո Վ Ը  Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝*

1. Հաստատել Բանկի էմիսիոն եկամուտներից՝ 33,438,300 (երեսուներեք միլիոն չորս հարյուր երեսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, չբաշխված շահույթից՝ 2,524,160,700 (երկու միլիարդ հինգ հարյուր քսանչորս միլիոն հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ և Գլխավոր պահուստից՝ 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ կանոնադրական կապիտալի ավելացմանն ուղղելու միջոցով Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումը և դրա հաշվին 3,000 ՀՀ դրամի չափով մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքի մեծացումը:

2. Հաստատել բանկի Կանոնադրության լրամշակված տարբերակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողով.

| | |
|---|---|
| նախագահ՝ | Ա. Խաչատրյան |
| անդամներ՝ | Ա. Աղամյան |
| | Ե. Ալեքսանյան |